

եւ աղօթագիրք մօր նորա Մարին տիկնոջ՝ դստեր Լեւոնի Գունդստապլի։— Սոցին ժամանակակից էր՝ ոչ 'ի Հեթմեանց, այլ 'ի Քաջբերունեաց երկրէ, սակայն պաշտօնեայ արքունի, Տիվան-պաշի (486), Կարապետ ոմն, որ յաւուրց Օշնի արքայի բաւեալ է ցաւուրս Կոստանդինի Բ, եւ † յամի 1356. զսմանէ աւանդէ ժամանակագիրն՝ յոյժ աղօթասէր գոլ, եւ յամի 1314 զնացեալ յուխտ 'ի վերոյիշեալ իտալական քաղաքն Պերուճիա, եւ տուեալ «

գրել անդ Ա.

կատարեալ գուխտն դարձաւ 'ի Սիս, եւ եղ յիշատակ զաւետարանն յեկեղեցին իւր յԵրեքխորան Աստուածածին», միայր տակաւին աւետարանն՝ յաւանդել զայս ժամանակագիրն, որպէս թուի 'ի կէս ԺԷ դարու։

Այսքան յիշատակք գրասիրաց եւ գրոց (գոր ես համարիմ մի 'ի հարիւրոց ծանուցեալ ինձ), շատ եւ թերեւս առաւել եւս իցեն 'ի հաւաստիս ծաւալման դպրութեան եւ գրասիրութեան 'ի Սիսուան, եւ ոչ անհաճոյ հրապուրանաց արեւելեան բանասիրաց մերոց՝ զալոյ այսր 'ի հետազօտութիւն. որպիսիք են հոչակաւոր վարդապետքն ժամանակին, գոր յիշեցաք ի ստորագրութեան Սոյ (224) :

Հաճոյական այլ եւ աղուական եւս փաստս գրասիրութեան եւ գրագիտութեան՝ աւանդէ մեզ ժամանակագիրն Կիլիկիոյ, ականատես եւ շօշափող յոքնահոյլ մատենից գրելոց առ վերոյիշեալ արքայազամբք. առ որովք, ասէ «Լի անթերի էր իմաստութիւնն ընդ այն ժամանակս՝ յաշխարհն Կիլիկեցոց. մինչեւ Կանայքն եւս գրէին եւ ընթեռնուին. եւ մինն ,

իւր բլոգմայց թեյս է. քան

Բարձրբերդցի Կոստանդին քահանային դուստրն Զապել կոչեցեալն, սա պաշտէր զՄանրուսմունս, եւ էր հմուտ ընթերցողութեան եւ արուեստին գրչութեան, եւ սիրէր կոյս մնալ...: Ըստ այսմ օրինակի ասեն, թէ էր կոյս մի ,

Եւ ինչպէս, եւ անունը ստացաւ իւր հմուտ. գրէր զայբութենս, եւ ասաց թէ՝ Ով որ սմա նմանեցնէ, նա է իմ տեսոյն արժանի. որ եւ գրեալ բերին զերկուքն. ոչ հաւանեալ՝ ասէ.

Ծայրըն ձային, ծակըն ծային՝

Չի՛ նըմանիր գիրն Ալիծին.

եւ դարձեալ ասէ վասն ուզողացն, թէ Ով որ գրէր

Զծայրըն ձային, զծակըն ծային,

Նա կու լինի փեսայ Ալիծին.